ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար մոդուլային տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզի բազմակի օգտագործման (ՀՀ Արմավիրի մարզի Արևիկ համայնքում «Մոդուլային» տիպի մսուր-մանկապարտեզի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի) օրինակելի նախագծանախահաշվային փաստաթղթերի ՀՀ թվով 19 համայնքներում (բնակավայրերում) տեղակապման նախագծանախահաշվային փաստաթղթերի քաղաքաշինական պարզ փորձաքննության ծառայության ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-21/5 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2021 թվականի սեպտեմբերի 23-ին կնքված N ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-21/5 պայմանագրում 2021 թվականի հոկտեմբերի 6-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

1.	Փոփոխության առաջացման պատճառ	ՀՀ կառավարության 27.08.2021թ. N 1381-Ն որոշում
	Փոփոխության նկարագրություն	Պայմանագրի բոլոր հավելվածներում գնման առարկայի անվավափոխություն:
	Փոփոխության հիմնավորում	Պայմանագրի 7.5 կետը:

Պատվիրատու՝ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտե

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

23.09.2021թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-21/5 գնման պայմանագրի

ք. Երևան <<06>> 10 2021թ.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<ԱՐԽԻՏԵԿՏ>> ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ն. Սիրեկանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ կառավարության 27.08.2021թ N 1381-Ն որոշումը և մոդուլային տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզի բազմակի օգտագործման (ՀՀ Արմավիրի մարզի Արևիկ համայնքում «Մոդուլային» տիպի մսուր-մանկապարտեզի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի) օրինակելի նախագծանախահաշվային փաստաթղթերի ՀՀ թվով 19 համայնքներում (բնակավայրերում) տեղակապման նախագծանախահաշվային փաստաթղթերի քաղաքաշինական պարզ փորձաքննության ծառայության մատուցման համար Կողմերի միջև 23.09.2021թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-21/5 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

- Կողմերը որոշեցին՝ Պայմանագրի բոլոր հավելվածներում <<Բերդ համայնքի Նորաշեն>>, <<Կապան>>, <<Պտղնի համայնք>> բառերը փոխարինել համապատասխանաբար <<Այրում համայնքի Բագրատաշեն>>, <<Սիսիան>>, <<Չարենցավան համայնքի Ֆանտան բնակավայր>> բառերով:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՏԱՐՈՂ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե ք. Երևան, Հանրապետության հրապարակ կառավարական տուն 3 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011037992, 900011038008, 900011038099, 900011038107, 900011038115, 900011038123, 900011038131, 900011038149, 900011038156, 900011038164 900011037596, 900011037604, 900011037620, 900011037638, 900011037646, 900011037653, 900011037661, 900011037679, 900011037687 ՀՎՀՀ 02565827	<<ԱՐԽԻՏԵԿՏ>> ՍՊԸ ք. Գյումրի, Շիրակացի փ. 83 շ., բն. 40 <<ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ>> ՓԲԸ Հ/Հ 1150019223233283 ՀՎՀՀ 05547385
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
_____ Ա. Մկրտչյան (ստորագրություն) Կ.Տ.	_____ Ն. Սիրեկանյան (ստորագրություն) Կ.Տ.